

Վ. Ա. ՔՈՍՅԱՆ, ԱՐԽԱՄԱՏԱՆԵՐԵՆԻ ԲԱՌԱԿԱՎԱԿԵՐՍՅԱՆՆԵՐԸ, ԵՐԼԱՆ, 2002 ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԼՈՒԹՅՈՒՆ, 1986, 251 էջ:

Վերջին ժամանակներս բառակապակցությունների քննությունը դարձել է լեզվաբանական հրատապ խնդիրներից մեկը: Հայերենի բառակապակցություններին նվիրված ուսումնասիրությունների մի ամբողջ շարքի հեղինակ է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վազարշակ Քոսյանը¹: Փաստորեն ներկա աշխատությամբ ամբողջանում է հայերենագետի մշակած բնագավառը:

Քանի որ ներկա մենագրությունը նվիրված է արևմտահայ գրական լեզվի բառակապակցական կաղապարների քննությանը, հենց սկզբից հարց է առաջանում, թե հեղինակը ինչ ժամանակահատված է դիտում իրրե գրական արևմտահայերենի զարգացման վիճակ: Գրքի շնորհիվ խոսքում ոչ միայն նշվում է դրական արևմտահայերենի ձևավորման և զործառնության շրջանը, այլև գրական լեզվի առաջացման ու զարգացման ուղին: Անհրաժեշտ է նշել, — գրում է Վ. Քոսյանը, — որ արևելահայերենը և արևմտահայերենը որպես գրական լեզու (իմա՝ լեզուներ — Ա. Ս.) ձևավորվել են XVIII—XIX դարերում՝ երկար ժամանակ որոշակիորեն շտաբերակվելով: Արևմտահայերենի ինքնուրույն զարգացումը կապված է XIX դարի 2-րդ կեսի հետ, երբ Արևմտահայաստանի հառարակական-քաղաքական կյանքը բուռն զարգացում ապրեց: Գրական լեզվի ձևավորումն ու զարգացումը, անշուշտ, հարթ չեն ընթացել (էջ 5): Հեղինակը տվյալ դեպքում նկատի ունի գրական արևմտահայերենի զարգացման տարընթաց միտումները. մերթ զմերթ արաբարացման ձգտումը, մերթ մերձեցումը բարբառայնությանը. երևույթներ, որոնք պայմանավորված էին գրական-քաղաքական զանազան հոսանքների առկայությամբ:

Հեղինակը, հետազոտությունը կատարելով համաժամանակյա պլանով, մանրազնին ուսումնասիրել է շուրջ 150 տարվա մի ժամանակահատվածի արևմտահայ հարուստ գրականությունը: Մենագրության մեջ բերվում են ավելի քան 100 հատորից քաղած բնագրային օրինակներ (սկսած Պետրոս Դուրյանից մինչև Գառնիկ Աղաբաբյան և Սիմոն Սիմոնյան): Ըստ առանձին գլուխների քննվում են գոյականական, ածականական, բայական, մակբայական բառակապակցությունները: Նշվում է, որ արևմտահայերենում գոյականը լրացումներ է ստանում գոյականով, ածականով, թվականով, դեմանվամբ, դերբայով, մակբայով, կապային կառույցով: Վերջ որում դերանուններով արտահայտված լրացումները քիչ են տարբերվում հարաբերակից խոսքի մասերով դրված լրացումներից: Այստեղ յուրահատուկ են սա, դա, նա ցուցականներով արտահայտված լրացումները (էջ 7): Ոչ միայն տվյալ դեպքում, այլև աշխատության բոլոր հատվածներում հստակորեն ներկայացվում են արևմտահայերենի բառակապակցությունների ոլորտում դրսևորվող ինքնատիպ երևույթները, թեև հեղինակը հատուկ չի զբաղվում արևմտահայերենի և արևելահայերենի, ինչպես նաև արևմտահայերենի ու միջին հայերենի կառուցվածքային աղբյուրների (ընդհանրությունների և առանձնահատկությունների) խնդրով: Ինչպես վկայում է գրքի ներածականում, այդ հարցին Վ. Քոսյանը մոտ ապագայում նվիրելու է մի առանձին ուսումնասիրություն:

Հենց սկզբից հարկ է նշել, որ հեղինակը իր ուսումնասիրության հիմքում դրել է հետազոտական այն նույն եղանակները, ինչ կիրարկված են իր մյուս աշխատություններում: Աշխատության արժանիքներից է այն, որ Վ. Քոսյանը նկարագրության ժամանակ հաշվի է առնում և հանգամանորեն դիտարկում է նաև մեկից ավելի մեկնաբանություն ունեցող լեզվական միավորները: Եկան այնպիսի կառույցներ, — գրում է հեղինակը, — որոնցում մակբայի լրացյալը կարող է մեկնաբանվել և՛ իրրե բայանուն, և՛ իրրե ոչ-բայանուն: Այդ հնարավորությունը պայմանավորված է տվյալ գոյականի բառակազմական կառուցվածքով: Իհարկե այսպիսի դեպքեր քիչ են հանդիպում (էջ 62): Բերված նմուշներից հիշատակենք մեկը. Եր այս ընթացքով Արփիար

¹ Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, «Գրաբարի բառակապակցությունները», Երևան, 1980, «Միջին հայերենի բառակապակցությունները», Երևան, 1984:

լուին: Այսպես, օրինակ՝ Գրաքարյան նախդիրները՝ գ, առ, ի, ըստ, ընդ, ց ինչ-որ շահով գործածական են արեւմտահայերենում: Այսպես, զ նախդիրը անձնական դերանվան առաջին դեմքի հետ գործածվում է լայնորեն (զիս), մասամբ և երկրորդ դեմքի հետ (զքեզ)՝ (էջ 208):

Բառակապակցական տիպերի քննությունը ըստ լեզվական ենթափուլերի դիտարկելիս արեւմտահայերենի զարգացման գործընթացը ավելի հստակորեն կդրսևորվեր: Ընդհանուր է, առանձին դեպքերում՝ հեղինակը ժամանակային այս կամ այն հատվածին բնորոշ գծեր ներկայացնում է, ինչպես՝ «Բանն այն է, որ գրաքարյան նախդիրները կառույցներն ավելի շատ գործածվել են XIX դարի երկրորդ կեսի գրողների երկերում, և այժմ էլ դրանք դրսևորվում են նույն հակումն ունեցող ստեղծագործությունների լեզվի մեջ» (էջ 208), սակայն այդպիսի մոտեցումը նպատակահարմար կլիներ կիրառել աշխատության բոլոր գլուխներում:

Մենագրության մեջ բերված օրինակներում պատահում են այնպիսիք, որոնք գրական 'կանոնական' լեզվում մերժելի են: Ինչպես՝ զալ բայի անորոշ դերբայի անփոփոխ ձևը, որը նախադաս գործածվելով վերածվել է ածականի (գայականի որոշիչի գերով), ներկայացվում է գրականության ճաղատ օրինակներով՝ «Ուստի պէտք է, որ հարսնիքը զալ շարթու ընենք»: «Զալ տարի կ'աւարտէ բոշկական ուսումը և այլն (էջ 57): Այդ կիրառությունը արեւմտահայ քերականագիտության մեջ դիտվում է իբրև սխալ կազմություն: Ինչ վերաբերում է լեզվական օտարաբանություններին և մերժելի կառույցներին, հեղինակի վերաբերմունքը հստակ և ճիշտ է. «Արեւմտահայերենում երանգավորիչ իմաստ ունեցող կառուցվածքները հայտնի են ընդհանուր առմամբ՝ թերեւս անփոփոխ ձևով է հանդես գալիս, իսկ նրան հարադրվող բայը՝ թերեւս ձևով, անփոփոխ ձևի փոխարեն: Առաջվում է, որ դերերը փոխվում են: Սա օտարաբանություն է և մերժելի» (էջ 228):

Ամփոփենք. Վ. Քսյանի ներկա մենագրությամբ ամբողջանում է հայոց լեզվի բառակապակցությունների համակարգի քննությունը: Այն մեծապես օգտակար կլինի հայերենագետներին և հայոց լեզվի մասնագետներին:

ԱՐՅԵՄ ՍԱՐԳՍՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու